

# ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

26.12.2016թ. | Ժամը 18:00-18:40 | ՀՀ կառավարություն

## Մասնակիցներ՝ Բազմաշահառու խմբի անդամներ

Նախագահող՝	Դավիթ Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Կարեն Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ	
Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ	
Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ	
Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ	
Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ	
Պերճ Խաչատրյան	«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության իրավական աջակցության ծառայության պետ	
Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոխտնօրեն	
Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ	
Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի խորհրդական	
Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն	
Արթուր Գրիգորյան	«Էկոիրավունք» հասարակական	

	կազմակերպության նախագահ
Էրիկ Գրիգորյան	«Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» հասարակական կազմակերպության համանախագահ
Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի Օգտակար հանաձոնների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

### ՀՀ կառավարության աշխատակազմ

Կարապետ Վարդանյան	ՀՀ վարչապետի օգնական
Արամ Ասատրյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար
Լուսինե Թովմասյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ
Լիլյա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդատու

Արձանագրող՝ Լ. Թովմասյան

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ

### 1. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի բացում

**Դ.Հարությունյանը** ողջունեց խմբի մասնակիցներին և ներկայացրեց նիստի օրակարգը: Նշվեց, որի նիստի ժամանակ ԲՇԽ-ն պետք է որոշում ընդունի 3 կարևոր փաստաթղթերի, մասնավորապես, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի, ՀՀ ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի և Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի վերաբերյալ: Դ.Հարությունյանը հայտնեց, որ ԲՇԽ-ի անդամների կողմից բավականին մեծ աշխատանք է իրականացվել նշված փաստաթղթերի մշակման համար:

Ասվեց, որ ստացվել է ՀՀ ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի վերաբերյալ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուի կարծիքը, որի համաձայն փաստաթղթում կատարվել են որոշակի փոփոխություններ: Առաջարկվեց ներկայացնել ԱՃԹՆ-միջազգային քարտուղարության առաջարկությունների հիման վրա կատարված փոփոխությունները:

---

## 2. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի հաստատում

**Ներկայացվեց**, որ, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախորդ նիստի ժամանակ հաստատված կարգով, ԲՇԽ-ի անդամների աշխատանքային հանդիպման ժամանակ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգում կատարվել են համապատասխան փոփոխություններ և ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի նախագիծը հրապարակվել է ՀՀ կառավարության վեբ-կայքի ԱՃԹՆ-ի էջում: ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ:

---

## 3. ԱՃԹՆ-ին միանալու համար երկրների կողմից անդամավճարի վճարման մասին ԱՃԹՆ-ի խորհրդի որոշման ներկայացում և քննարկում

**Ներկայացվեց**, որ 2016 թվականի հոկտեմբերին Աստանայում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի 35-րդ նիստի ժամանակ որոշում է կայացվել, որ ԱՃԹՆ-ն ներդնող երկրները պետք է վճարեն 10հազ. ԱՄՆ դոլար ամենամյա անդամավճար, որն ուղղվելու է երկրի անդամակցության վավերացման աշխատանքների ֆինանսավորմանը:

---

## 4. ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի հաստատում

**Ներկայացվեց**, որ ըստ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախորդ նիստի ժամանակ հաստատված ժամանակացույցի կազմակերպվել և իրականացվել են ՀՀ ԱՃԹՆ 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի մշակման աշխատանքները, ԲՇԽ-ի անդամների հետ անցկացվել են մի շարք աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ: Մշակված ՀՀ ԱՃԹՆ 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱՃԹՆ միջազգային քարտուղարությանը և ստացվել են քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուի առաջարկությունները նախագծի վերաբերյալ: Հաշվի առնելով առաջարկությունները՝ նախագծում կատարվել են որոշակի փոփոխություններ, մասնավորապես, ներառվել է ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրություն միջոցառումը: Ներկայացվեցին աշխատանքային ծրագրում ներառված՝ պետական

Ֆինանսավորմամբ իրականացվելիք միջաջառումները և շեշտվեց, որ անհրաժեշտ է շարունակական աշխատանքներ իրականացնել Համաշխարհային բանկի և մյուս միջազգային դոնոր կազմակերպություններ հետ համագործակցության շրջանակում, որպեսզի հնարավոր լինի ՀՀ ԱՃԹՆ աշխատանքային ծրագրում ընդգրկված միջոցառումների արդյունավետ իրականացումը:

ՀՀ ԱՃԹՆ 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ:

---

## 5. Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի հաստատում

ՀՀ ԲՇԽ-ի անդամները **քննարկեցին** Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի նախագիծը: Մասնավորապես, քննարկվեց, թե Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի առաջին զեկույցը որ ֆինանսական տարվա (տարիների) համար պետք է կազմվի: Քննարկման արդյունքում և ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ **որոշվեց**, որ Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի առաջին զեկույցը կներկայացվի 2015-2016թթ. ֆինանսական տարիների համար, որը հնարավորություն կտա առավել համադրելի և ամբողջական տեղեկատվություն ստանալ ՀՀ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ: ԲՇԽ-ի անդամների կողմից **որոշվեց** նաև, որ Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի համար հաշվետվություններ պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետությունում մետաղական հանքանյութ արդյունահանող բոլոր կազմակերպությունները:

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ և որոշվեց Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացնել մինչև տարեվերջ: